



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/110/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

22 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի 2025 թվականի ապրիլի 22-ին քննելով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ՝ Անիկ Գրիգորյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/110/2025 վարչական գործը.

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի (այսուհետ՝ հաշվետու տարի) տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ներկայացման պահանջների պահպանման և դրանում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավաստության ու ամբողջականության ստուգում, որի ընթացքում պարզվել է, որ Անիկ Մարտունիկի Գրիգորյանը հաշվետու տարում Կուսակցությանը կատարել է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով նվիրատվություն:

1.2 Հանձնաժողովը հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ուսումնասիրությամբ պարզել է, որ Անիկ Գրիգորյանը հանդիսանում է «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) իմաստով հայտարարատու անձ և Հանձնաժողով է ներկայացրել պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր:

1.3 Կուսակցությանը 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով կատարած նվիրատվության համար դրամական միջոցներ ունենալն Անիկ Գրիգորյանի և նրա ընտանիքի անդամների օրինական եկամուտներով հիմնավորված լինելու հանգամանքը պարզելու համար, Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով, իրականացրել է Անիկ Գրիգորյանի կողմից Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում և նրա ամուսնու՝ Սոս Վարդանի Հարությունյանի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում հայտարարագրված համապատասխան տվյալների, մասնավորապես՝ դրամական միջոցների, գույքի ձեռքբերումների և եկամուտների

վերաբերյալ ստուգում: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Կուսակցությանը կատարված նվիրատվությունը չի հիմնավորվում վերջիններիս կողմից հայտարարագրված տվյալներով:

1.4 Հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 30-ի թիվ 01/2744-2024 և 2025 թվականի հունվարի 22-ի թիվ 01/218-2025 գրություններով Անիկ Գրիգորյանից պահանջվել է Հանձնաժողովին ներկայացնել վերջինիս կողմից Կուսակցությանը կատարած նվիրատվության՝ օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտող տեղեկություններ (պարզաբանումներ):

1.5 2024 թվականի սեպտեմբերի 2-ին և 2025 թվականի փետրվարի 19-ին Հանձնաժողով են մուտքագրվել Անիկ Գրիգորյանի պարզաբանումները, որով նա հայտնել է.

1) իր հետ համատեղ չբնակվող դստեր (ուսման վճարի մասին տեղեկությունը ներկայացրել է տարեկան հայտարարագրի «ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարներ» բաժնում) վերաբերյալ տեղեկությունը թյուրիմացաբար դուրս է մնացել իր հայտարարագրերից, ինչը շտկվել է 31/08/2024թ.-ին («Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժնում լրացրել է դստեր տվյալները):

2) 2023 թվականի տարեկան հայտարարագրի տվյալների ամբողջականացման նպատակով՝ Անիկ Գրիգորյանը տեղեկացրել է, որ 2023 թվականի ընթացքում 3,500,000 ՀՀ դրամի չափով պարտքով գումար է վերցրել փեսայից՝ Անդրեասյան Արմանից և 2,360,000 ՀՀ դրամ զարմիկից՝ Կամո Ստեփանյանից: Բացի այդ նաև հարազատների կողմից ստացել է նվիրատվության ձևով աջակցություն:

1.6 Անիկ Գրիգորյանի կողմից ներկայացված պարզաբանման և կցված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Անիկ Մարտունիկի Գրիգորյանի Հայտարարագրում առերևույթ առկա են սխալ և ոչ ամբողջական ներկայացված տվյալներ, մասնավորապես՝

Հայտարարագրի «Ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճար» բաժնում «Ծախսի բովանդակությունը» սյունակում նշված է «երեխաների ուսման վճար», մինչդեռ, Մելանյա Սոսի Հարությունյանի և Լիլիթ Հրայրի Հարությունյանի մասին տվյալները հայտարարագրված չեն Հայտարարագրի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժնում:

Անիկ Գրիգորյանը՝ 2023 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրի՝ «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ» բաժնում հայտարարագրել է՝ ընդհանուր 24,335,000 ՀՀ դրամի չափով վարկերի մայր գումարների մնացորդ, Հայտարարագրի «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրել է 21,165,000 ՀՀ դրամի վարկերի մայր գումարների մնացորդ, մինչդեռ հիփոթեքային վարկի մարմանն ուղղված վճարումները (ներառյալ՝ մայր գումար և տոկոսագումարներ), որոնք կազմել են 5,473,906 ՀՀ դրամ, հայտարարագրված չեն Հայտարարագրի «Վարկերի մարմանն ուղղված վճարումներ» բաժնում:

Անիկ Գրիգորյանը Հայտարարագրի «Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույք» բաժնում հայտարարագրել է 2023 թվականի մարտի 1-ին ձեռք բերված ք. Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի 34/1 39 հասցեում գտնվող գույքի վերաբերյալ տվյալը, մինչդեռ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալների համաձայն

տվյալ գույքի նկատմամբ իրավունքը (ընդհանուր բաժնային սեփականություն) գրանցվել է 23.02.2023 թվականից, ինչը նշանակում է, որ գույքի վերաբերյալ տվյալը հայտարարագրման ենթակա է Հայտարարագրի «Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերած անշարժ գույք» բաժնում՝ նշելով գույքի ձեռք բերման գինը, եղանակը, գործարքի կողմը:

2023 թվականի ընթացքում ստացված 13,032,500 ՀՀ դրամ հիփոթեքային վարկի և ընդհանուր 6,000,000 ՀՀ դրամ երկու սպառողական վարկերի գումարները հայտարարագրված չեն Հայտարարագրի «Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում:

2023 թվականի ընթացքում Արման Անդրեասյանից փոխառությամբ ստացված 3,500,000 ՀՀ դրամ գումարը և Կամո Ստեփանյանից ստացված 2,360,000 ՀՀ դրամ գումարը հայտարարագրված չեն «Հաշվետու տարվա եկամուտներ» և «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժիններում:

Անիկ Գրիգորյանի կողմից հայտարարագրված չեն նաև հարազատներից ստացված մի շարք նվիրատվություններ:

Հայտարարագրում Անիկ Գրիգորյանը չի հայտարարագրել իր և իր ամուսնու ծնողների, իր և իր ամուսնու քույրերի և եղբայների վերաբերյալ տվյալները՝ որպես մերձավոր ազգակցությամբ կամ խնամհությամբ կապված անձինք:

1.7 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մարտի 24-ին Անիկ Գրիգորյանին հասցեագրել է թիվ 01/1178-2025 գրությունը, հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Անիկ Գրիգորյանը

ստացել է 2025 թվականի մարտի 25-ին՝ դրա մասին հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.8 2025 թվականի ապրիլի 4-ին պատշաճ ծանուցված Անիկ Գրիգորյանը և նրա ներկայացուցիչը՝ Մելանյա Սոսի Հարությունյանի (որպես լիազորությունները հավաստող փաստաթուղթ ներկայացրել է 04/04/2025 թվականի Անիկ Գրիգորյանի կողմից տրված լիազորագիրը) ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 47/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.9 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Անիկ Գրիգորյանի ներկայացուցիչ՝ Մելանյա Հարությունյանի մասնակցությամբ 2025 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը՝ 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Անիկ Գրիգորյանը հայտնել է, որ ԿԿՀ-ի կողմից արձանագրված սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը պայմանավորված է եղել հայտարարագրմանն առնչվող կարգավորումների մասին բավարար չափով տեղեկացված չլինելու հանգամանքով, ինչպես նաև նրանով, որ հայտարարագիրն անձամբ չի լրացրել, օգնել է քաղաքապետարանի աշխատողը: Իրականացված ստուգման արդյունքում արձանագրված՝ ընթացիկ տարեկան ծախսերի բացասական մեծությունը թյուրիմացության հետևանք է, քանի որ տեղյակ չի եղել, որ հարազատներից ստացված նվիրատվությունները ևս պետք է հայտարարագրել: 2023 թվականի ընթացքում ընկերուհիներից, մասնավորապես՝ Սուսաննա Հարությունյանից 2023 թվականի պարբով վերցրել է 400,000 ՀՀ դրամ գումար, որը

2023 թվականին հետ չի վերադարձրել, իսկ Մարինե Սարգսայանից 300,000 ՀՀ դրամ, որից 200,000 ՀՀ դրամը հետ է վերադարձրել 2024 թվականին, Նարինե Խառատյանից 400,000 ՀՀ դրամ, որից հետ է վերադարձրել 200,000 ՀՀ դրամը 2024 թվականի սկզբին, Սուսաննա Հովասափյանից վերցրել է 400,000 ՀՀ դրամ, որից հետ է վերադարձրել 200,000 ՀՀ դրամը 2024 թվականի սկզբին: Փոխառությունները ստացել է կանխիկ եղանակով և որևէ դեպքում պայմանագրեր չեն կնքվել:

Բացի այդ ամուսնու եղբայրը՝ Վահագն Հարությունյանը, Սանկտ Պետերբուրգ քաղաքից 2,500 ԱՄՆ դոլարի չափով կանխիկ եղանակով նվիրատվություն է կատարել իր ընտանիքին՝ բնակարանի ձեռքբերման նպատակով:

Վարույթի մասնակիցը միաժամանակ հայտնել է, որ իր եղբայրն իրեն պարտք է եղել 2 մլն ՀՀ դրամի չափով, որը 2023 թվականի ընթացքում հետ է վերադարձրել իրեն: Եղբայրը զբաղվում է անասնապահությամբ, ստացել է վարկ և հետ է վերադարձրել պարտքով վերցված գումարը:

Բացի այդ, ամուսնու և իր մայրիկից կանխիկ եղանակով ստացել է նվիրատվություններ՝ յուրաքանչյուրից 1,5 մլն ՀՀ դրամի չափով: Այդ գումարները հանդիսացել են գյուղատնտեսությունից ստացված եկամուտներ:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/110/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում հետևյալը՝

3.1 Անիկ Գրիգորյանը 2023թ. ապրիլի 12-ից մինչ օրս հանդիսանում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ (<https://sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=cd53933c-e6eb-417f-8404-4ef99ddefb5d>):

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ շտեմարանի տվյալների համաձայն՝ Մելանյա Սոսի Հարությունյանը և Լիլիթ Հրայրի Հարությունյանը հանդիսանում են Անիկ Գրիգորյանի երեխաները::

3.4 Անիկ Գրիգորյանի «[REDACTED]» ընկերությունում առկա բանկային հաշվի քաղվածքի համաձայն՝ 2023 թվականի ընթացքում հիփոթեքային վարկի մարմանն ուղղված վճարումները (ներառյալ՝ մայր գումար և տոկոսագումարներ) կազմել են 5,473,906 ՀՀ դրամ:

3.5 Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալների համաձայն՝ ք. Երևան, [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Անիկ Գրիգորյանի սեփականության իրավունքը (ընդհանուր բաժնային սեփականություն) գրանցվել է 2023 փետրվարի 23-ին ,:

3.6 2023 թվականի փետրվարի 20-ին «[REDACTED]» ընկերության և Անիկ Գրիգորյանի միջև կնքված թիվ [REDACTED] Անշարժ գույքի առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագրի համաձայն՝ Անիկ Գրիգորյանին տրամադրվել է 13,032,500 ՀՀ դրամ հիփոթեքային վարկ:

3.7 2023 թվականի հուլիսի 25-ին [REDACTED] ընկերության և Անիկ Գրիգորյանի միջև կնքված վարկային պայմանագրի համաձայն՝ Անիկ Գրիգորյանը ստացել է 5,920,000 ՀՀ դրամ սպառողական վարկ:

3.8 2023 մայիսի 16-ին և հոկտեմբերի 23-ին Անիկ Գրիգորյանին տրամադրվել է երկու սպառողական վարկ՝ 6,000,000 ՀՀ դրամի չափով:

3.9 Վահագն Վարդանի Հարությունյանի գրավոր հայտարարության համաձայն՝ 2023 թվականի փետրվար-մարտ ամիսների իր եղբոր՝ Սոս Վարդանի

Հարությունյանի ընտանիքին, կանխիկ եղանակով տրամադրել է 2,500 ԱՄՆ դոլարի չափով նվիրատվություն՝ բնակարան ձեռք բերելու նպատակով:

3.10 Թաթուլ Մարտունիկի Գրիգորյանի գրավոր հայտարարության համաձայն՝ իր քրոջը՝ Անիկ Մարտունիկի Գրիգորյանին, կանխիկ եղանակով վերադարձրել է վերջինիս կողմից որպես փոխառություն տրված 2,000,000 ՀՀ դրամի չափով գումարը:

3.11 Մարինե Բաբկենի Սարգսյանի գրավոր հայտարարության համաձայն՝ 2023 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Անիկ Գրիգորյանին կանխիկ եղանակով որպես փոխառություն տվել է 300,000 ՀՀ դրամի չափով գումարը, որը 2023 թվականի ընթացքում Անիկ Գրիգորյանի կողմից չի վերադարձվել:

3.12 Սուսաննա Ռուբենի Հարությունյանի գրավոր հայտարարության համաձայն՝ 2023 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Անիկ Գրիգորյանին կանխիկ եղանակով որպես փոխառություն տվել է 400,000 ՀՀ դրամի չափով գումարը, որը 2023 թվականի ընթացքում Անիկ Գրիգորյանի կողմից չի վերադարձվել:

3.13 Նարինե Աշոտի Խառատյանի գրավոր հայտարարության համաձայն՝ 2023 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Անիկ Գրիգորյանին կանխիկ եղանակով որպես փոխառություն տվել է 400,000 ՀՀ դրամի չափով գումարը, որը 2023 թվականի ընթացքում Անիկ Գրիգորյանի կողմից չի վերադարձվել:

3.14 Սուսաննա Լյովայի Հովասափյանի գրավոր հայտարարության համաձայն՝ 2023 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Անիկ Գրիգորյանին կանխիկ եղանակով որպես փոխառություն տվել է 400,000 ՀՀ դրամի չափով գումարը, որը 2023 թվականի ընթացքում Անիկ Գրիգորյանի կողմից չի վերադարձվել:

3.15 Անիկ Գրիգորյանը 2023 թվականի ընթացքում Արման Անդրեասյանից կանխիկ եղանակով որպես փոխառություն ստացել է 3,500,000 ՀՀ դրամի չափով գումար:

3.16 Անիկ Գրիգորյանը 2023 թվականի ընթացքում Կամո Ստեփանյանից կանխիկ եղանակով որպես փոխառություն ստացել է 2,360,000 ՀՀ դրամի չափով գումար:

3.17 Անիկ Գրիգորյանը չի հայտարարագրել իր և իր ամուսնու ծնողների, քույրերի և եղբայրների վերաբերյալ տվյալները Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժնում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

4.3 Օրենքի 39-րդ հոդվածի (Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ:

Սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու

պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկան՝ անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք (...)
հանձնված, վերադարձված փոխառությունը.

4.5 Օրենքի 40.1-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված ծախսերը:

2. Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը.

1) հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը.

2) շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը.

3) ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը.

4) գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը.

5) վարկի մարմանն ուղղված վճարումները.

6) անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը.

7) ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

4.6 Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:(...) Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ ստացված փոխառությունները, ստացված վարկերը (այդ թվում՝ հիպոտեկային), տրված փոխառությունների կամ բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը:

4.7 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անգգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց

ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում

փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Անիկ Գրիգորյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալները Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Հայտարարատու անձի կողմից Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրման օրենսդրական նպատակը կայանում է հայտարարատու անձի գործունեության թափանցիկությունը, հանրային հաշվետվողականությունը և վերահսկողությունը, ինչպես նաև վերջինիս գույքային դրության բացահայտումը:

Սույն գործով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Անիկ Գրիգորյանը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի մայիսի 23-ին ներկայացված Հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական և սխալ տվյալներ, այն է.

Հայտարարագրի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժիններում չի հայտարարագրել Մելանյա Սոսի Հարությունյանի և Լիլիթ Հրայրի Հարությունյանի մասին տվյալները, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Հայտարարագրի «Վարկերի մարմանն ուղղված վճարումներ» բաժնում չի հայտարարագրել հիփոթեքային վարկի մարմանն ուղղված վճարումները (ներառյալ՝ մայր գումար և տոկոսագումարներ)՝ 5,473,906 ՀՀ դրամ, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 40.1-ին հոդվածի 2-րդ կետի 5-րդ մասի համաձայն:

Անիկ Գրիգորյանն իր՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույք» բաժնում հայտարարագրել է 2023 թվականի մարտի 1-ին ձեռք բերված ք. Երևան, [REDACTED] հասցեում գտնվող գույքի վերաբերյալ տվյալը, մինչդեռ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալների գույքի նկատմամբ իրավունքը (ընդհանուր բաժնային սեփականություն) գրանցվել է 23.02.2023 թվականից, ինչը նշանակում է, որ գույքի վերաբերյալ տվյալը հայտարարագրման ենթակա է 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերած անշարժ գույք» բաժնում՝ նշելով գույքի ձեռք բերման գինը, եղանակը, գործարքի կողմը:

Հայտարարագրի «Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում որպես եկամուտ հայտարարագրված չեն 2023 թվականի ընթացքում ստացված 13,032,500 ՀՀ դրամ հիփոթեքային վարկի և երկու սպառողական վարկերի՝ 6,000,000 և 5,920,000 ՀՀ դրամ գումարները, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն:

Հայտարարագրի «Հաշվետու տարվա եկամուտներ» և «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժիններում հայտարարագրված չեն 2023 թվականի ընթացքում Արման Անդրեասյանից փոխառությամբ ստացված 3,500,000 ՀՀ դրամ գումարը և Կամո Ստեփանյանից ստացված 2,360,000 ՀՀ դրամ գումարները, որոնք պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն:

Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժնում Անիկ Գրիգորյանը չի հայտարարագրել իր և իր ամուսնու ծնողների, իր և իր ամուսնու քույրերի և եղբայրների վերաբերյալ տվյալները, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ եկամուտների, ծախսերի, ինչպես նաև ընտանիքի անդամների և մերձավոր ազգականների վերաբերյալ տվյալների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով չեն բացահայտվել Անիկ Գրիգորյանի կողմից չհայտարարագրված եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով հնարավոր չի եղել բացահայտել վերջինիս կողմից 2023 թվականի ընթացքում կատարված ծախսերի, այդ թվում՝ Կուսակցությանը որպես նվիրատվություն փոխանցված գումարի օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելու հանգամանքը: Այսպիսով, նշված տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության մասին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Անիկ Գրիգորյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի համար:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանմանը, համաձայն որի՝ արձանագրված սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը պայմանավորված է եղել հայտարարագրմանն առնչվող կարգավորումների մասին բավարար չափով տեղեկացված չլինելու հանգամանքով, ինչպես նաև այն հանգամանքով, որ հայտարարագիրն անձամբ չի լրացրել, օգնել է

քաղաքապետարանի աշխատողը, Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները սահմանված են Օրենքով, ինչպես նաև Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցով, հետևաբար հայտարարատու անձը՝ ղեկավարվելով Օրենքի և հայտարարագրի լրացման ուղեցույցով պարտավոր է հայտարարագրել հայտարարագրման ենթակա բոլոր տվյալները, միաժամանակ հավաստում է հայտարարագրված տվյալների անձամբ լրացնելու փաստը և օրենքով սահմանված կարգով կրում է սահմանված տվյալների ճիշտ և ամբողջական հայտարարագրման պարտականություն:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ամփոփելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ

հողվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հողվածով, Օրենսգրքի 169.28-րդ հողվածի 5-րդ մասով, 244.17-րդ հողվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիսան համայնքի ավագանու անդամ Անիկ Մարտունիկի Գրիգորյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անիկ Մարտունիկի Գրիգորյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Անիկ Մարտունիկի Գրիգորյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ